ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«13» մայիսի 2019 թվականի N 102-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԵՆԹԱԿԱ ՀԱՆՔԱՅԻՆ ՀՈՒՄՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշումը, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2015 թվականի մայիսի 6-ի թիվ 139-Ն հրամանով հաստատված հավելված 1-ի 1-ին, 9-րդ և 10-րդ կետերի պահանջները, հաշվի առնելով հրամանի հավելված 2-ով սահմանված սահմանափակումների ենթակա հանքային հումքի տեսակների ցանկի 1-ին կետի 4-րդ ենթակետը, ինչպես նաև «ԱՆՄՈՌ» ՓԲ ընկերության կողմից 2019 թվականի մայիսի 1-ի թիվ 15 գրությունը և Ընդերքի գործակալության պետի պաշտոնակատարի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԱՆՄՈՌ» ՓԲ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել հանքային հումքի տեսակի՝ ՀՀ տարածքից երրորդ երկրներ արտահանման գլխավոր լիցենզիա ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7103100 009 ծածկագրին դասվող 3000,0 (երեք հազար) կիլոգրամ երկնագույն փիրուզի բնական չմշակված քար երրորդ երկրներ արտահանելու նպատակով:
2. Սահմանել հանքային հումքի տեսակի՝ ՀՀ տարածքից երրորդ երկրներ արտահանման գլխավոր լիցենզիայի գործողության ժամկետը՝ տրման պահից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Ընդերքի գործակալության պետին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել գլխավոր լիցենզիայի հանձնումը Ընկերությանը:
4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի պարտականությունները կատարող Հակոբ Վարդանյանին:

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5/10/2019

VERIFIED OCSP 5/10/2019 19:47:56 GMT+4

Signed by: VARDANYAN HAKOB 3914890533

ԿԱՏԱՐՈՂ
ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ